



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

# **Արդյունաբերական սեփականություն**

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

**No 4 (28)**

ՄԱՍ 1  
ЧАСТЬ 1

Агентство интеллектуальной собственности  
Республики Армения

**ПРОМЫШЛЕННАЯ  
СОБСТВЕННОСТЬ**

Официальный бюллетень

Սույն տեղեկագրում գետեղված տեղեկությունները համարվում են  
հրապարակված 2003 թվականի դեկտեմբերի 8-ից

Երեւան 2003

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՄԱՍ 1

ԳՅՈՒՏԵՐ .....	5, 69
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին .....	7, 71
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՍՈՒՇՆԵՐ .....	19, 83
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....	21, 85
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ .....	27
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին .....	29
ՑՈՒՑԻՉՆԵՐ .....	57
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	61
ԵՐԿՏԱՌ ԿՈՂԵՐԸ .....	86

### ՄԱՍ 2

ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ .....	5
Տեղեկություններ 1999թ-ին գրանցված ֆիրմային անվանումների հայտերի մասին. ....	7

Հրատարակվում է Մտավոր սեփականության  
գործակալության կողմից 1995թ.

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3  
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին  
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական  
ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной  
собственности с 1995г.

375010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3  
Тел. 563-258 отдел приема заявок  
Тел. 561-126 отдел информационно-технологического  
обеспечения

Internet: <http://www.arnpatent.org>  
E-mail: [arnpat@cornet.am](mailto:arnpat@cornet.am)

**СОДЕРЖАНИЕ**

ЧАСТЬ 1	
ИЗОБРЕТЕНИЯ	5, 69
Сведения о выданных патентах	7, 71
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ	19, 83
Сведения о выданных патентах	21, 85
ТОВАРНЫЕ ЗНАКИ	27
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	29
УКАЗАТЕЛИ	57
СООБЩЕНИЯ	61
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ	86

ЧАСТЬ 2	
ФИРМЕННЫЕ НАИМЕНОВАНИЯ	5
Сведения о зарегистрированных заявках фирменных наименований в 1999г.	7

**CONTENTS**

PART 1	
INVENTIONS	5, 69
Information on granted patents	7, 71
INDUSTRIAL DESIGNS	19, 83
Information on granted patents	21, 85
TRADE MARKS	27
Information on registered trade marks and service marks	29
INDEXES	57
REPORTS	61
TWO-LETTER CODES	86

PART 2	
TRADE NAMES	5
Information on registrated firm name's applications in 1999.	7

**ԳՅՈՒՏԵՐ**

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների  
նույնականացման միջազգային կոդերը  
ըստ ՄՄՅԿ ST.9 ստանդարտի**

- 11 *արտոնագրի համարը*
- 13 *փաստաթղթի տեսակի կոդը*
  - A1 *Գյուտի հիմնական արտոնագիր*
  - A2 *Գյուտի նախնական արտոնագիր*
  - B2 *Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր*
- 21 *հայտի համարը*
- 22 *հայտի ներկայացման թվականը*
- 23 *լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն*
- 24 *արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը*
- 31 *առաջնային հայտի համարը*
- 32 *առաջնային հայտի ներկայացման թվականը*
- 33 *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը*
- 42 *հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը*
- 44 *գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 45 *գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 51 *միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
- 54 *գյուտի անվանումը*
- 56 *տեղեկատվության աղբյուրներ*
- 57 *գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
- 62 *ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
- 65 *հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը*
- 71 *հայտատուն, երկրի կոդը*
- 72 *գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
- 73 *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
- 74 *արտոնագրային հավատարմատար*
- 85 *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
- 86 *միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը*
- 87 *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը*

### Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 7 A01B 3/36 (11) 1359 (13) A2  
 (21) P20020197 (22) 27.11.2002  
 (42) 11.04.2003

(71) Շավարշ Գրիգորյան (AM), Նորիկ Բազիկյան (AM), Արամայիս Եսոյան (AM), Անահիտ Մելքոնյան (AM), Սարտուն Վիրաբյան (AM)

(72) Շավարշ Գրիգորյան (AM), Նորիկ Բազիկյան (AM), Արամայիս Եսոյան (AM), Անահիտ Մելքոնյան (AM), Սարտուն Վիրաբյան (AM)

(73) Շավարշ Գրիգորյան, Երեւան, Ա. Տիգրանյան 5, բն. 73 (AM), Նորիկ Բազիկյան, Երեւան, Մանթաշյան 4/5, բն. 7 (AM), Սարտուն Վիրաբյան, Լոռու մարզ, գյուղ Արջուտ (AM), Արամայիս Եսոյան, Կոտայքի մարզ, գ. Քանաքեռավան (AM), Անահիտ Մելքոնյան, Երեւան, Սարյան 14, բն. 7 (AM)

(54) Լանջերի եւ քարքարոտ հողերի հարթ վարի գութան

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ հողի հիմնական մշակման մեքենաներին:

Լանջերի եւ քարքարոտ հողերի հարթ վարի գութանը կազմված է շրջանակից, նրան հողակապորեն ամրակցված շրջագութանիկներից, աջ եւ ձախ շրջման իրաններից՝ իրենց թելերով, ինչպես նաեւ դանակներից եւ հենարանային անիվներից: Թելերը եւ շրջագութանիկներն ունեն 1,2-1,25 մետր երկարություն, ընդ որում բացահայտված են թելերի եւ շրջագութանիկների պտուտակային մակերեսային շրջման անկյունների կախման մաթեմատիկական արտահայտությունները թելերի եւ շրջագութանիկների երկարություններից:

Կրճատվում է հողի լրացուցիչ մշակումների քանակը, նվազում է գութանի քարշային դիմադրությունը եւ առերի սեպացումը, նվազագույնի է հասցվում լանջերի հողի երոզիան, 2 նկ.:

(51) 7 A01B 3/36 (11) 1360 (13) A2  
 (21) P20030032 (22) 12.03.2003  
 (42) 13.05.2003

(71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)

(72) Արշալույս Թարվերդյան (AM), Շավարշ Գրիգորյան (AM), Արամայիս Եսոյան (AM)

(73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) Հարթ վարի գութան

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ հողի հիմնական մշակման մեքենաներին:

Հարթ վարի գութանը կազմված է շրջանակից, աջ եւ ձախ շրջող իրաններից, շրջագութանիկներից, դանակներից եւ հենարանային անիվներից, ընդ որում շրջանակն ունի ելուստ շրջագութանիկները կարգավորելու համար:

Բացառվում է առերի սեպունը եւ նվազեցվում է գութանի քարշային դիմադրությունը, 2 նկ.:

(51) 7 A01B 79/00 (11) 1361 (13) A2  
 C02F 1/46  
 (21) P20020217 (22) 17.12.2002  
 (42) 11.04.2003

(71) Սամվել Սահակյան (AM)

(72) Սամվել Սահակյան (AM), Հունան Ղազարյան (AM), Վիգեն Պապինյան (AM), Ռաֆիկ Սարգսյան (AM)

(73) Սամվել Սահակյան, Երեւան, Նանսենի 3, բն. 31 (AM)

(54) Կարբոնատային ալկալիական հողերի քիմիական մեխորացման եղանակ եւ դրա իրականացման սարք

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսության բնագավառին, մասնավորապես՝ կարբոնատային ալկալիական հողերի քիմիական մեխորացման եղանակներին եւ դրանց իրականացման սարքերին:

Եղանակը կայանում է նրանում, որ հողը հարթեցնում են, փխրեցնում 0.8 մ խորությամբ, բաժանում չեկերի եւ մշակում հանքային աղեր պարունակող ջրերի թթվեցման սարքի անոդային խցից դուրս եկող թթուներով, ապա սովորական ջրով լվանում են եւ դրենաժային ցանցի միջոցով հեռացնում աղերը:

Հանքային աղեր պարունակող ջրերի թթվեցման սարքն ունի անոդային, կաթոդային եւ միջին խցեր, անոդ, կաթոդ, սնող խողովակ: Անոդային եւ կաթոդային խցերը միջին խցից անջատված են իներտ դիաֆրագմաներով, ընդ որում, անոդային խուցն ունի թթվային լուծույթի հեռացման, իսկ կաթոդային խուցը՝ հիմնային լուծույթի հեռացման խողովակառուտեր: Միջին խցում լցնում են կերակրի աղի խիտ լուծույթ, իսկ հանքային աղեր պարունակող ջուրը տրվում է միաժամանակ անոդային եւ կաթոդային խցերին:

Բարձրանում է եղանակի արդյունավետությունը, 2 անկախ կետ, 2նկ.:

- (51) 7 A01N 39/04 (11) 1362 (13) A2  
C07C 307/00  
C07C 67/30
- (21) P20030019 (22) 25.02.2003
- (42) 13.05.2003
- (71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)
- (72) Վռամ Դովլաթյան (AM), Էլինա Համբարձումյան (AM), Արմենակ Խաչատրյան (AM), Վարդան Թոռչյան (AM), Մարգարիտա Դովլաթյան (AM), Սիրանուշ Հարությունյան (AM)
- (73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երևան, Տերյան 74 (AM)
- (54) Հերբիցիդային պատրաստուկ
- (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը, մասնավորապես՝ հերբիցիդային պատրաստուկներին, որոնք կարող են կիրառվել ցորենի ցանքերում երկշաքիլ մոլախոտերի դեմ պայքարի համար:  
Առաջարկվում է հերբիցիդային պատրաստուկ, որը ներառում է 0-2.4- երկքլորֆենօքսիացետիլզինկոլաթթվի բուբիլային եթեր, N-[(4-մեթիլ-6-մեթօքսի-1,3,5-տրիագինիլ-2)-ամինակարբոնիլ]- 2'-քլորբենզոլ-սուլֆոնամիդի երկէթիլամինատեթանոլային աղ, պսևդոկոնոլ, ՕՍ-7 մակնիշի էնոլսարար եւ կայունարար:  
Ընդլայնվում է հերբիցիդային պատրաստուկների տեսականին:

- (51) 7 A23K 1/00 (11) 1363 (13) A2  
C07K 1/00
- (21) P20030038 (22) 24.03.2003
- (42) 11.04.2003
- (71) Ժաննետա Բակունց (AM), Գելորգ Աֆանդյան (AM), Գագիկ Սարգսյան (AM)
- (72) Ժաննետա Բակունց (AM), Գելորգ Աֆանդյան (AM), Գագիկ Սարգսյան (AM)
- (73) Ժաննետա Բակունց, Երևան, Օրբելու 33, բն.43 (AM), Գելորգ Աֆանդյան, Երևան, Կորյունի I նրբ. 10, բն. 31 (AM), Գագիկ Սարգսյան, Երևան, Օրբելու 4, բն. 22 (AM)
- (54) Կալիֆոռնիական որդերի կենսազանգվածից պրոտեինների ստացման եղանակ
- (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը, մասնավորապես կալիֆոռնիական կարմիր որդերի կենսազանգվածից պրոտեինների ստացման եղանակներին, եւ կարող է կիրառվել անասնաբուժության, բժշկության, օժանդակի արտադրության մեջ:

Ըստ հայտարկվող եղանակի, որպես հունք օգտագործում են կալիֆոռնիական կարմիր որդերի հայկական պոպուլյացիան:

Որդերը լվանում են ջրով, սառեցնում, մասնատում, համասեռացնում 5M NaCl-ի լուծույթում: Ստացված համասեռ կենսազանգվածը կենտրոնախուսում են, վերնստվածքային պրոտեիններ պարունակող շերտը կողմնակի նյութերից եւ աղի բյուրեղներից ազատվելու նպատակով ջրազրկում են եւ ապա չորացնում: Ստացված զանգվածը գտում են վակուումի պայմաններում, լվանում սպիրտով եւ չորացնում, սկզբում՝ վակուումային էքսիկատորում, ապա բաց օդում:

Բարձրանում է պրոտեինների ելքը:

- (51) 7 A61B 5/02 (11) 1364 (13) A2
- (21) P20030020 (22) 25.02.2003
- (42) 11.04.2003
- (71) Ռաֆայել Ստամբուլյան (AM), Ռուզաննա Մայրապետյան (AM)
- (72) Ռաֆայել Ստամբուլյան (AM), Ռուզաննա Մայրապետյան (AM)
- (73) Ռաֆայել Ստամբուլյան, Երևան, Սարմենի 50, բն.7 (AM), Ռուզաննա Մայրապետյան, Երևան, Ավետ Ավետիսյան 1, բն.24 (AM)
- (54) Սրտի իշեմիկ հիվանդության վաղ ախտորոշման եղանակ
- (57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ սրտի իշեմիկ հիվանդության վաղ ախտորոշման եղանակներին:

Հետազոտվողի կրծքային արտածումներում էլեկտրասրտագրի բաղադրամասերի ինտեգրալները համադրում են դրանց համապատասխան բնականոն մեծությունների հետ հետևյալ բանաձևի միջոցով  $\Delta = a - b$ , որտեղ a-ն հետազոտվողի ինտեգրալների մեծությունն է յուրաքանչյուր կրծքային արտածման մեջ, b-ն՝ նույն արտածումներում անհատական բնականոն մեծությունները, իսկ  $\Delta$ -ն դրանց տարբերությունը, ապա քանակորեն որոշում ախտաբանական շեղման առկայությունը եւ դրա չափը տարբեր կրծքային արտածումներում:

Ապահովվում է սրտի իշեմիկ հիվանդության վաղ ախտորոշման արդյունավետությունը մինչև բեռնվածության կիրառումը:

- (51) 7 A61B 8/12 (11) 1365 (13) A1  
A61B 8/00
- (21) 98051 (22) 18.06.1998
- (31) 08/879125 (32) 19.06.1997 (33) US
- (71) Մեդինոլ Լթդ(IL)
- (72) Էհուդ Նախտոմի (IL), Յակոբ Ռիխտեր (IL)

- (73) Մեդիոնոլ Լթդ. (IL)
- (74) Յ. Դավթյան
- (54) Ներանոթային անդրաձայնային պատկերման սարք (տարբերակներ) եւ եղանակ (տարբերակներ)
- (57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես արյունատար անոթներում և այլ մարմնային խոռոչներում ներդրվող սարքերին և նրանց միջոցով ստացված տեղեկատվության մշակման եղանակներին:

Սարքն ունի անդրաձայնային ազդանշանի ընդունիչ և հաղորդիչ, որոնք միացված են համակարգչին: Սարքը հաղորդում է անդրաձայնային ազդանշաններ և ընդունում է մարմնային խոռոչի հետ կապված տեղեկատվություն պարունակող անդրադարձված անդրաձայնային ազդանշաններ:

Սարքին միացված համակարգչի միջոցով ընդունված ազդանշաններից կազմավորում են առաջին պատկերը կամ պատկերների շարք և երկրորդ պատկերը կամ պատկերների շարք, համապատասխանաբար համեմատում երկրորդ պատկերը (շարքը) առաջին պատկերի (շարքի) հետ, կայունացնում երկրորդ պատկերն առաջին պատկերի նկատմամբ, համապատասխանեցնում պատկերների առաջին և երկրորդ շարքերը:

Զգալիորեն բարձրացվում է արյունատար անոթների կամ մարմնային խոռոչի վերլուծության որակը՝ հնարավոր դարձնելով առավել ճշգրիտ ախտորոշում և զնահատում, 14 անկախ կետ, 15 նկ.:

- (51) 7 A61C 7/00 (11) 1366 (13) A2
- (21) P20030028 (22) 07.03.2003
- (42) 11.04.2003
- (71) Յուրի Պողոսյան (AM), Արեգ Սեպյան (AM), Աննա Պողոսյան (AM)
- (72) Յուրի Պողոսյան (AM), Արեգ Սեպյան (AM), Աննա Պողոսյան (AM)
- (73) Յուրի Պողոսյան, Երեւան, Սունդուկյան 3ա, բն.17 (AM), Արեգ Սեպյան, Երեւան, Դեմիրճյան 27, բն.8 (AM), Աննա Պողոսյան, Երեւան, Սունդուկյան 3ա, բն.17 (AM)

- (54) Վերին ծնոտային ծոցի առաջային պատի արատի պլաստիկ փակման եղանակ
- (57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես, քթի, կոկորդի, ականջի հիվանդություններին եւ դիմածնոտային վիրաբուժությանը, ավելի կոնկրետ՝ վերին ծնոտային ծոցի առաջային պատի արատի պլաստիկ փակման եղանակներին:

Վերին ծնոտային ծոցի արատի պլաստիկ փակման նպատակով, այլաժին (ալոգենային) հյուսվածքապատվաստը ձեւում են, սեւեռում ծոցի առաջային պատին երկու ներծծվող կարե-

րով, ընդ որում մինչեւ սեւեռումը դեպի ծոցը դարձած հյուսվածքապատվաստի մակերեսը ծածկում են (1:2)–(1:3) հարաբերությամբ խառնված ակնամոմի եւ ձիթապտղի յուղի քսուրով: Նվազեցվում է հյուսվածքապատվաստի վարակման հնարավորությունը:

- (51) 7 A61D 1/00 (11) 1367 (13) A2
- G01N 21/342
- (21) P20030036 (22) 19.03.2003
- (42) 13.05.2003
- (71) Յովհաննես Նաղաշյան (AM), Լիանա Գրիգորյան (AM)
- (72) Յովհաննես Նաղաշյան (AM), Լիանա Գրիգորյան (AM)
- (73) Յովհաննես Նաղաշյան, Երեւան, Սարյան 33, բն.34 (AM), Լիանա Գրիգորյան, Երեւան, Բաշինջաղյան 191, բն.39 (AM)

- (54) Ճագարների քոսի տզերի անջատման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է անասնաբուժությանը, մասնավորապես՝ քոսով վարակված ճագարների ախտահարված մաշկից վերցված նմուշներից տզերի անջատման եղանակներին, եւ կարող է կիրառվել քոսի տարբերական ախտորոշման համար: Ախտահարված մաշկից անջատված կեղերը եւ քերուկները տեղադրում են ճենապակե սանդի մեջ, վրան ավելացնում 10%-ոց կալիումի հիդրօքսիդի լուծույթ, սանդաթակով լավ տրորում, ապա ավելացնում են 40%-ոց նատրոնական բորակի լուծույթ, լցնում ապակե բաժակի մեջ եւ 10 րոպե տեւողությամբ տեղադրում մագնիսական խառնիչի վրա: Լուծույթի մակերեւույթից մետաղյա օղով վերցնում են մեկ-երկու կաթիլ, տեղափոխում այն առարկայական ապակու վրա եւ հետազոտում մանրադիտակով:

Յեշտացվում է քոսի տզերի անջատումը եւ դրանով բարձրացվում տարբերական ախտորոշման արդյունավետությունը, հատկապես՝ քոսի տզերով թույլ վարակվածության դեպքում:

- (51) 7 A61K 7/16 (11) 1368 (13) A2
- A61K 7/26
- (21) P20030029 (22) 11.03.2003
- (42) 13.05.2003
- (71) Սարգիս Վարդանյան (AM), Արթուր Ղազարյան (AM)
- (72) Սարգիս Վարդանյան (AM), Արթուր Ղազարյան (AM)
- (73) Սարգիս Վարդանյան, Երեւան, Մոսկովյան փող. նրբ. 50 (AM), Արթուր Ղազարյան, Երեւան, Մոսկովյան փող. նրբ. 50 (AM)



(54) Ատամներ սպիտակեցնելու բաղադրանյութ (57) Գյուտը վերաբերում է բերանի խռոչի խնամքի միջոցներին, մասնավորապես՝ ատամներ սպիտակեցնելու բաղադրանյութերին:

Առաջարկվում է ատամներ սպիտակեցնելու բաղադրանյութ, որը ներառում է բորական թթու, հակաանեխիչ եւ ցեոլիթ: Որպես հակաանեխիչ օգտագործում են մայրիի յուղ կամ արեբուրիկի եփուկ:

Ապահովվում է ատամների սպիտակեցման արդյունավետության բարձրացումը:

(51) 7 A61K 7/48 (11) 1369 (13) A2  
(21) P20030026 (22) 03.03.2003  
(42) 13.05.2003

(71) Սարգիս Վարդանյան (AM), Արթուր Ղազարյան (AM)

(72) Սարգիս Վարդանյան (AM), Արթուր Ղազարյան (AM)

(73) Սարգիս Վարդանյան, Երեւան, Մոսկովյան փող. նրբ. 50 (AM), Արթուր Ղազարյան, Երեւան, Մոսկովյան փող. նրբ. 50 (AM)

(54) Կոսմետիկական դիմակ դեմքի եւ պարանոցի մաշկի խնամքի համար

(57) Գյուտը վերաբերում է կոսմետոլոգիայի բնագավառին, մասնավորապես, դեմքի եւ պարանոցի մաշկի խնամքի միջոցներին:

Կոսմետիկական դիմակը պարունակում է հավկիթի սպիտակուց, բորական թթու, մանրէակասեցնող բաղադրիչ եւ ցեոլիթի փոշի: Որպես մանրէակասեցնող բաղադրիչ օգտագործում են ալոեի կամ վարունգի կամ կիտրոնի հյութ կամ երիցուկի եփուկ կաթի մեջ:

Ապահովվում է վերնամաշկի մաքրումը մեռած բջիջներից, թեփոտության վերացումը եւ մաշկի առաձգականության բարձրացումը:

(51) 7 B22F 9/08 (11) 1370 (13) A2  
(21) P20030027 (22) 04.03.2003  
(42) 11.04.2003

(71) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (AM)

(72) Ազատ Գյուլզարյան (AM), Արմեն Գյուլզարյան (AM)

(73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երևան, Տերյան 105 (AM)

(54) Ալյումինի փոշու ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է փոշեմետաղագործությանը, մասնավորապես՝ ալյումինի փոշու ստացման եղանակներին:

Ալյումինի ելանյութը ենթարկում են ջերմային մշակման՝  $650 \pm 2^\circ\text{C}$  ջերմաստիճանում, պահում

այդ ջերմաստիճանում 25-30 րոպե, ապա սառեցնում եւ մանրացնում հայտնի եղանակով: Ընդ որում, որպես ելանյութ վերցնում են ալյումին պարունակող արդյունաբերական եւ/կամ կենցաղային թափոններ, իսկ սառեցման պրոցեսը կատարում են սենյակային ջերմաստիճանի ջրի մեջ ընկղմելու միջոցով:

Իջեցվում է ալյումինի փոշու ինքնաթեքը:

(51) 7 B23F 1/06 (11) 1371 (13) A2  
(21) P20030022 (22) 03.03.2003  
(42) 13.05.2003

(71) Ջոն Ասատրյան (AM)

(72) Ջոն Ասատրյան (AM)

(73) Ջոն Ասատրյան, Գյումրի, Մ.Խորենացու 24, բն.4 (AM)

(54) Փոքր մոդուլի ատամնանիվների մշակման սարք

(57) Գյուտը վերաբերում է հաստոցաշինությանը, մասնավորապես՝ փոքր մոդուլի ատամնանիվների մշակման սարքերին:

Սարքն ունի իրան, շարժաբերային բաշխիչ լիսեռ՝ պտուտակային ատամնավոր զույգերով, որոնք փոխազդում են բանող իլերի հետ: Իլերն ունեն մշակվող անիվների տեղակայման ցանգեր: Յուրաքանչյուր բանող իլ հավում է հենակային կարգավորող պրիզմայի հետ: Իլերի միջառանցքային հեռավորությունը ընտրված է  $1,5 \times n \times \pi m \geq D + (1 \dots 2)$  մմ պայմանից, որտեղ՝

n – ը կամայական ամբողջ թիվ է,

m- ը մշակվող անվի մոդուլն է,

D- մ մշակվող անվի առավելագույն արտաքին տրամագիծն է, իսկ հենակային պրիզմաներն ունեն կարգավորող պտուտակներ:

Լավարկվում է բանող իլերի միջառանցքային հեռավորությունը՝ կտրման ուժերի տատանումները փոքրացնելու, իլերի առավելագույն քանակ եւ միաչափ անիվներ ստանալու համար, ՅՆկ.:

(51) 7 B23Q 17/12 (11) 1372 (13) A2  
G01H 1/00  
(21) P20030040 (22) 25.03.2003  
(42) 13.05.2003

(71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)

(72) Սեյրան Կոխլիկյան (AM), Հակոբ Մատղաշյան (AM), Պավել Եսայան (AM)

(73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) Մեխանիկական տատանումների չափիչ սարք

(57) Գյուտը վերաբերում է չափողական տեխնիկային, մասնավորապես՝ մեխանիկական

տատանումների չափիչ սարքերին: Սարքն ունի իրան, սնդիկով լցված երեք անցուղիներ, որոնք դասավորված են կոորդինատների երեք առանցքների ուղղությամբ: Յուրաքանչյուր անցուղի երկու ծայրից փակված է առաձգական տարրերով, որոնց վրա սեւեռված են տենզո-տվիչներ:

Բարձրացվում է մեխանիկական տատանումների չափման զգայունությունը եւ ճշգրտությունը, 2 նկ.:

- (51) 7 C01B 33/16 (11) 1373 (13) A2
  - (21) P20020220 (22) 19.12.2002
  - (42) 11.03.2003
  - (71) Սերգեյ Հայրապետյան (AM)
  - (72) Սերգեյ Հայրապետյան (AM)
  - (73) Սերգեյ Հայրապետյան, Երևան, Չեռնիշելսկու 58, բն. 1 (AM)
  - (54) Միկրոգնդային սիլիկաժելի ստացման եղանակ
  - (57) Գյուտը վերաբերում է քրոմատագրության համար անօրգանական միկրոգնդային սորբենտների ստացման եղանակներին:
- Սիլիկազոլը անցկացնում են իոնափոխանակման սյունակով՝ ստանալով թթվային սիլիկազոլ (рН 2,8-3,0), ապա դրա մեջ ներմուծում ամոնիումի սիլիկատ եւ երկէթանոլամին: Ստացված խառնուրդը էմուլսացնում են տոլուոլի միջավայրում էմուլսարարի՝ սորբիտանմոնոստեարատի առկայությամբ, ապա էմուլսիան դոնդողագոյացնում են 20%-անոց քացախաթթվի լուծույթով, ծերացնում հիդրոժելը, անջատում լուծիչից, լվանում թորած ջրով, զտում եւ թրծում 700-750°C ջերմաստիճանում:

Բարելավվում են սորբենտի կառուցվածքային բնութագրերը:

- (51) 7 C01B 33/16 (11) 1374 (13) A2
- H01F 1/00
- (21) P20020218 (22) 19.12.2002
- (42) 11.03.2003
- (71) Սերգեյ Հայրապետյան (AM)
- (72) Սերգեյ Հայրապետյան (AM)
- (73) Սերգեյ Հայրապետյան, Երևան, Չեռնիշելսկու 58, բն.1 (AM)
- (54) Մագնիսական հատկությամբ միկրոգնդային սորբենտի ստացման եղանակ
- (57) Գյուտը վերաբերում է մագնիսական հատկությամբ միկրոգնդային սորբենտների ստացման եղանակներին, որոնք կարող են կիրառվել քրոմատագրության մեջ քիմիական միացությունների մագնիսական անջատման համար:

Մագնիսական հատկություն ունեցող փոշին՝ երկարժեք մետաղների ֆեռիտները, ներմուծում են սիլիկազոլի մեջ, ապա ավելացնում ամոնիումի սիլիկատ, ստացված կախույթը էմուլսացնում են օրգանական լուծիչի միջավայրում, էմուլսիան դոնդողագոյացնում քացախաթթվով՝ ստանալով հիդրոժել, որը ծերացնում են, անջատում լուծիչից, լվանում թորած ջրով, զտում եւ թրծում 600-700°C:

Ստացվում են վերարտադրելի կառուցվածքային բնութագրերով սորբենտներ:

- (51) 7 C01B 33/18 (11) 1375 (13) A2
- B01D 15/08
- (21) P20020221 (22) 19.12.2002
- (42) 11.03.2003
- (71) Սերգեյ Հայրապետյան (AM)
- (72) Սերգեյ Հայրապետյան (AM)
- (73) Սերգեյ Հայրապետյան, Երևան, Չեռնիշելսկու 58, բն. 1 (AM)
- (54) Պոլիմերային շերտով պատված սիլիկաժելային սորբենտի ստացման եղանակ
- (57) Գյուտը վերաբերում է պոլիմերային շերտով պատված անօրգանական սորբենտների ստացման եղանակներին, որոնք կարող են կիրառվել քրոմատագրության մեջ:

Սիլիկաժելը ներմուծում են մոնոմերների խառնուրդի կամ օլիգոմերի օրգանական լուծույթի մեջ, որից հետո սենյակային ջերմաստիճանում մասնակիորեն մինչեւ 15-20 կշռ.% մնացորդային պարունակության հասնելը, հեռացնում են լուծիչը, խառնուրդը ենթարկում պոլիմերացման հերմետիկ տարողության մեջ 100-120°C ջերմաստիճանում, ապա լվանում ստացված սորբենտը: Ընդլայնվում են եղանակի տեխնիկական հնարավորությունները, ստացվում են տարբեր ֆունկցիոնալ հատկություններով եւ վերարտադրելի բնութագրերով սորբենտներ:

- (51) 7 C01B 33/18 (11) 1376 (13) A2
- B01D 15/08
- (21) P20020219 (22) 19.12.2002
- (42) 11.03.2003
- (71) Սերգեյ Հայրապետյան (AM)
- (72) Սերգեյ Հայրապետյան (AM)
- (73) Սերգեյ Հայրապետյան, Երևան, Չեռնիշելսկու 58, բն. 1 (AM)
- (54) Պոլիմերային թաղանթով պատված սիլիկաժելային սորբենտի ստացման եղանակ
- (57) Գյուտը վերաբերում է պոլիմերային թաղանթով պատված անօրգանական սորբենտների ստացման եղանակներին, որոնք կարող են կիրառվել քրոմատագրության մեջ:

Սիլիկաժելի մասնիկների մակերեսային պատում են երկշերտ պոլիմերային թաղանթով: Առաջին հիդրոֆիլ շերտը իրենից ներկայացնում է, օրինակ, 2-հիդրօքսիէթիլմեթակրիլատի եվ մեթիլմեթակրիլատի օլիգոմերից ստացված պոլիմեր: Այդ շերտը ստանում են ներմուծելով սիլիկաժելը օլիգոմերի օրգանական լուծույթի մեջ, որից հետո լուծիչը հեռացնում են սենյակային ջերմաստիճանում, խառնուրդը պոլիմերացնում են 100-120°C ջերմաստիճանում հերմետիկ տարողության մեջ:

Երկրորդ շերտը կարող է լինել հիդրոֆոբ եւ իրենից ներկայացնել, օրինակ, մեթիլմեթակրիլատից ստացված պոլիմեր: Այդ շերտը ստանում են առաջին շերտի ստացմանը համանման: Ստացվում են տարբեր ֆունկցիոնալ հատկություններով եվ վերարտադրելի բնութագրերով սորբենտներ:

- (51) 7 C07D 213/2 (11) 1377 (13) A2  
C07D 213/57  
C07D 213/63
- (21) P20020205 (22) 02.12.2002
- (42) 13.05.2003
- (71) Երեւանի պետական համալսարան (AM)
- (72) Գագիկ Մելիքյան (AM), Ալեքսանդր Փիրոյան (AM), Աննա Յովհաննիսյան (AM), Աիդա Ավետիսյան (AM)
- (73) Երեւանի պետական համալսարան, Երեւան, Ալեք Մանուկյան 1 (AM)
- (54) 1-արիլ-3-ցիանա-4-ֆենիլպիրիդոն-2-ների ստացման եղանակ
- (57) Գյուտը վերաբերում է օրգանական քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ N-տեղակալված պիրիդոնների ածանցյալների ստացման եղանակներին, որոնք ունեն կարգիտոնիկ ակտիվություն:

2-ցիանա-3-մեթիլդարչնաթթվի էթիլային էսթերը ենթարկում են կոնդենսացման երկմեթիլֆորմամիդի երկմեթիլացետալի հետ եռացող քսիլոլի միջավայրում, ապա ստացված միջակայալ երկմեթիլամինաածանցյալը 90-95°C ջերմաստիճանում փոխազդեցության մեջ են դնում արոմատիկ ամինների հետ սառցային քացախաթթվի միջավայրում, որից հետո ամինաածանցյալը եռացնում են քսիլոլի միջավայրում 10-12 ժամվա ընթացքում :

Ընդլայնվում են եղանակի տեխնիկական հնարավորությունները, ստացվում են N-տեղակալված պիրիդոններ տարբեր ֆունկցիոնալ խմբերով:

- (51) 7 C07D 301/28 (11) 1378 (13) A2  
(21) P20030006 (22) 21.01.2003  
(42) 11.04.2003
- (71) Հայաստան Հակոբյան (AM)
- (72) Հայաստան Հակոբյան (AM), Գագիկ Թորոսյան (AM), Գրիգորի Այվազյան (AM)
- (73) Հայաստան Հակոբյան, Երեւան, Դավիթ Անհաղթի 18, բն.32 (AM)
- (54) Գլիցիդիլմեթակրիլատի ստացման եղանակ
- (57) Գյուտը վերաբերում է օրգանական մոնոմերի՝ գլիցիդիլմեթակրիլատի ստացման եղանակներին, որը կարող է կիրառվել որպես պոլիմերների վերափոխիչ: Մեթակրիլաթթուն ենթարկում են փոխազդեցության էպիքլորհիդրինի հետ նատրիումի հիդրօքսիդի ջրային լուծույթում՝ 70-75°C ջերմաստիճանի եւ խառնման պայմաններում, կատալիզորդի եվ պոլիմերացման արգելակչի՝ հիդրոքսիդի առկայությամբ: Ապա օրգանական շերտը անջատում են ջրային շերտից եւ թորում: Որպես կատալիզորդ կիրառում են կատամին-AB:

Բարձրանում է արգասիքի էլքը եւ պարզեցվում եղանակը:

- (51) 7 C07D 471/02 (11) 1379 (13) A2  
(21) P20020204 (22) 02.12.2002  
(42) 13.05.2003
- (71) Երեւանի պետական համալսարան (AM)
- (72) Գագիկ Մելիքյան (AM), Ալեքսանդր Փիրոյան (AM), Աիդա Ավետիսյան (AM)
- (73) Երեւանի պետական համալսարան, Երեւան, Ալեք Մանուկյան 1 (AM)
- (54) 1,1-երկմեթիլ-5-R-պիրոլա[3,4-c]պիրիդին-3,4(1H, 5H)-դիոնների ստացման եղանակ
- (57) Գյուտը վերաբերում է օրգանական քիմիայի բնագավառին, մասնավորապես, պիրոլապիրիդոնների ածանցյալների ստացման եղանակներին, որոնք ունեն հակաբորբոքային, հանգստացնող եւ ցավազրկող ակտիվություն:

N-տեղակալված 3-R-կարբամոիլ-4,5,5-եռամեթիլ-պիրոլինոն-2-ները կոնդենսացնում են երկմեթիլֆորմամիդի երկմեթիլացետալի հետ եռացող քսիլոլի միջավայրում 5-6 ժամվա ընթացքում:

Ընդլայնվում են եղանակի տեխնիկական հնարավորությունները:

- (51) 7 C07D 491/048 (11) 1380 (13) A2  
(21) P20020206 (22) 02.12.2002  
(42) 13.05.2003
- (71) Երեւանի պետական համալսարան (AM)
- (72) Գագիկ Մելիքյան (AM), Աննա Յովհաննիսյան (AM), Աիդա Ավետիսյան (AM)

(73) Երեւանի պետական համալսարան, Երեւան, Ալեք Մանուկյան 1 (AM)

(54) 1,1-երկմեթիլ-5-արիլֆուրա[3,4-c]պիրիդին-3,4[1H,5H]-դիոնների ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է օրգանական քիմիայի բնագավառին, մասնավորապես, Ն-տեղակալված պիրիդոնների ստացման եղանակներին, որոնք ունեն հակաբորբոքային, հանգստացնող եւ ցավազրկող ակտիվություն:

2-էօքսիկարբոնիլ-3,4,4-եռամեթիլ-2-բուտեն-4-ոլիդը ենթարկում են կոնդենսացման երկմեթիլֆորմամիդի երկմեթիլացետալի հետ եռացող քսիլոլի միջավայրում, ապա ստացված միջանկյալ երկմեթիլամինաածանցյալը ցիկլացնում են արոմատիկ ամինների հետ սառցային քացախաթթվի միջավայրում 15-16 ժամվա ընթացքում:

Ընդլայնվում են եղանակի տեխնիկական հնարավորությունները:

(51) 7 C07D 491/048 (11) 1381 (13) A2  
(21) P20020203 (22) 02.12.2002  
(42) 13.05.2003

(71) Երեւանի պետական համալսարան (AM)

(72) Գագիկ Մելիքյան (AM), Ալեքսանդր Փիրոյան (AM), Աիդա Ավետիսյան (AM)

(73) Երեւանի պետական համալսարան, Երեւան, Ալեք Մանուկյան 1 (AM)

(54) 1,1-երկմեթիլֆուրա[3,4-c]պիրիդին-3(1H)-ոն-4(5H)թիոնի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է օրգանական քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ ֆուրապիրիդոնների ծծումբ պարունակող ածանցյալների ստացման եղանակներին, որոնք ունեն հակաբորբոքային, հանգստացնող եւ ցավազրկող ակտիվություն:

2-թիոկարբամոլիլ-3,4,4-եռամեթիլ-2-բուտեն-4-ոլիդը ենթարկում են կոնդենսացման երկմեթիլֆորմամիդի երկմեթիլացետալի հետ եռացող քսիլոլի միջավայրում 15-16 ժամվա ընթացքում:

Ընդլայնվում են եղանակի տեխնիկական հնարավորությունները:

(51) 7 C09D 1/02 (11) 1382 (13) A2  
(21) P20030004 (22) 17.01.2003  
(42) 11.04.2003

(71) Վլադիմիր Օվչիյան (AM), Մելիդա Կոստանդյան (AM), Աիդա Գրիգորյան (AM), Էլեոնորա Դանիելյանց (AM), Ցոլակ Ստեփանյան (AM)

(72) Վլադիմիր Օվչիյան (AM), Մելիդա Կոստանդյան (AM), Էլեոնորա Դանիելյանց (AM), Աիդա Գրիգորյան (AM), Ցոլակ Ստեփանյան (AM)

(73) Վլադիմիր Օվչիյան, Երեւան, Սունդուկյան 28ա, բն.35 (AM), Մելիդա Կոստանդյան, Երեւան, Փափագյան 16ա, բն.66 (AM), Աիդա Գրիգորյան, Երեւան, 16-րդ թաղ., շ.39, բն.1 (AM), Էլեոնորա Դանիելյանց, Երեւան, Զարավարեմտյան թաղ. Բ/1, շ.7, բն.16 (AM), Ցոլակ Ստեփանյան, Երեւան, Կոմիտասի պող. 1-ին նրբ.15 (AM)

(54) Սիլիկատային ներկ

(57) Գյուտը վերաբերում է ներկերի բաղադրանյութերին, մասնավորապես՝ սիլիկատային ներկերին եւ կարող է օգտագործվել մետաղները կոռոզիայից պաշտպանելու համար:

Սիլիկատային ներկը պարունակում է սիլիկատային ալկալիական լուծույթ, բարեփոխիչ՝ 6:4:1 զանգվածային հարաբերակցությամբ թերթաքարի յուղի, բեւակնախեժի եւ կարբօքսիլմեթիլցելյուլոզի խառնուրդ, պնդարար՝ 10:1 զանգվածային հարաբերակցությամբ նատրիումի եռբազմաֆոսֆատ եւ ծանր մետաղի նիտրատ, գունանյութեր, լցանյութեր եւ ջուր, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ, զանգվ. %.

սիլիկատային ալկալիական լուծույթ	65-70
բարեփոխիչ	2,7-4,0
պնդարար	0,6-1,2
գունանյութեր ու լցանյութեր	20-23
ջուր	մնացածը

Ներկի կիրառումը հնարավորություն է տալիս ստանալ բարձր պաշտպանիչ հատկություններով օժտված պատվածքներ:

(51) 7 C09D 1/02 (11) 1383 (13) A2  
C09J 1/02  
(21) P20030037 (22) 21.03.2003  
(42) 11.06.2003

(71) Վլադիմիր Օվչիյան (AM), Մելիդա Կոստանդյան (AM), Աիդա Գրիգորյան (AM), Լեոնորա Դանիելյանց (AM), Ցոլակ Ստեփանյան (AM)

(72) Վլադիմիր Օվչիյան (AM), Մելիդա Կոստանդյան (AM), Աիդա Գրիգորյան (AM), Լեոնորա Դանիելյանց (AM), Ցոլակ Ստեփանյան (AM)

(73) Վլադիմիր Օվչիյան, Երեւան, Սունդուկյան 28ա, բն.35 (AM), Մելիդա Կոստանդյան, Երեւան, Վահր. Փափագյան 16ա, բն.66 (AM), Աիդա Գրիգորյան, Երեւան, 16-րդ թաղ. 39, բն.1 (AM), Լեոնորա Դանիելյանց, Երեւան, ԶԱԹ Բ/1, 7, բն.16 (AM), Ցոլակ Ստեփանյան, Երեւան, Կոմիտասի 1-ին նրբ.15 (AM)

(54) Սիլիկատային կապակցանյութ  
(57) Գյուտը վերաբերում է պաշտպանիչ պատվածքների բաղադրանյութերին, մասնավորապես՝ սիլիկատային կապակցանյութերին եւ կարող է կիրառվել մետաղները կոռոզիայից պաշտպանելու համար:

Կապակցանյութը պարունակում է ալկալիական մետաղի հիդրօքսիդի ջրային լուծույթ՝ մետաղի հիդրօքսիդի 80-130 գ/լ պարունակությամբ, սիլիցիումի երկօքսիդի ժել՝ SiO<sub>2</sub> : Me<sub>2</sub>O = 2,2 մոլային հարաբերությամբ, ալյումինի հիդրօքսիդ, ցինկի օքսիդ եւ լցանյութ՝ նրբահատիկ բնական ալյումասիլիկատային հումք, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ.%)

ալկալիական մետաղի հիդրօքսիդի ջրային լուծույթ	70,0-75,0
սիլիցիումի երկօքսիդի ժել	9,4-13,5
ալյումինի հիդրօքսիդ	0,6-0,8
ցինկի օքսիդ	0,3-0,4
լցանյութ	13,0-17,0:

Բարձրանում են կապակցանյութի հիման վրա ստացված պաշտպանիչ պատվածքների ֆիզիկամեխանիկական եւ հարակցական հատկությունները:

(51) 7 C11D 10/04 (11) 1384 (13) A2  
(21) P20030051 (22) 16.04.2003  
(42) 11.06.2003

(71) Սարգիս Վարդանյան (AM), Արթուր Ղազարյան (AM)  
(72) Սարգիս Վարդանյան (AM), Արթուր Ղազարյան (AM)  
(73) Սարգիս Վարդանյան, Երեւան, Մոսկովյան փող. նրբ. 50 (AM), Արթուր Ղազարյան, Երեւան, Մոսկովյան փող. նրբ. 50 (AM)

(54) Մաքրող մածուկ  
(57) Գյուտը վերաբերում է կենցաղային քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ մաքրող միջոցների բաղադրանյութերին:

Մաքրող մածուկը պարունակում է հղկանյութ՝ ցեոլիթ, էմուլսարար՝ մակերեւութաակտիվ նյութ, օքսիդիչ, օճառափոշի, հոտավորիչ եւ ջուր, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ.%)

հղկանյութ	60,0-65,0
էմուլսարար	0,5-6,5
օքսիդիչ	0,1-5,0
օճառափոշի	10,0-20,0
հոտավորիչ	0,1-0,3
ջուր	մնացածը:

Բարձրանում է մածուկի մաքրող հատկությունը:

(51) 7 C12P 17/00 (11) 1385 (13) A2  
C12N 1/14  
C12R 1/07

(21) P20030008 (22) 29.01.2003  
(42) 11.04.2003

(71) «Կենսատեխնոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ (AM)  
(72) Սոնա Ավետիսյան (AM), Անիշկա Յովսեփյան (AM), Սուսաննա Քելեշյան (AM), Անահիտ Չախալյան (AM), Նարինե Միքայելյան (AM), Լեյլի Չիլ-Ակոբյան (AM), Աշոտ Սաղյան (AM), Բորիս Կարաբեկով (AM), Գայանե Յովհաննիսյան (AM), Արմեն Աղաջանյան (AM)

(73) «Կենսատեխնոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ, Երեւան, Գյուրջյան 14 (AM)

(54) Մանրէաբանական սինթեզով ջրալուծելի մելանինի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կենսատեխնոլոգիային, մասնավորապես, մանրէաբանական սինթեզով ջրալուծելի մելանինի ստացման եղանակներին:

Մելանին արտադրող *Bacillus thuringiensis* subsp.galleriae (BTGK1-70) շտամը աճեցնում են սնուցիչ միջավայրում: Կուլտուրալ հեղուկը ցենտրիֆուգում են, որից հետո կենսազանգվածը հեռացնում են, իսկ վերնստվածքային հեղուկը (ֆուզատը) անցկացնում ( -0,63) - (+0,2)մմ տրամագիծ ունեցող իոնիտի հատիկներով Cl-ծելի HA-1P խեժով, ապա խեժը լվանում ջրով, ողողում ամոնիակային ջրով, ստացված էլյուատը շոգիացնում վակուումով, գերզտում եւ չորացնում:

Բարձրացվում է եղանակի տեխնոլոգիամիտությունը եւ արդյունավետությունը, նվազեցվում է նպատակային արգասիքի ինքնարժեքը:

(51) 7 E02B 15/04 (11) 1386 (13) A2  
C09K 3/32

(21) P20030030 (22) 11.03.2003  
(42) 13.05.2003

(71) Սարգիս Վարդանյան (AM), Արթուր Ղազարյան (AM)  
(72) Սարգիս Վարդանյան (AM), Արթուր Ղազարյան (AM)  
(73) Սարգիս Վարդանյան, Երեւան, Մոսկովյան փող. նրբ. 50 (AM), Արթուր Ղազարյան, Երեւան, Մոսկովյան փող. նրբ. 50 (AM)

(54) Նավթային աղտոտումներից ջրային մակերեւոյթների մաքրման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է շրջակա միջավայրի պահպանմանը, մասնավորապես՝ նավթային աղտոտումներից ջրային մակերեւոյթների մաքրման եղանակներին: Մաքրման եղանակը

կայանում է նրանում, որ ջրային մակերեւոյթի վրա նավթի լողացող թաղանթը մշակում են կլանիչով` 0.05-1 մմ մանրութամբ ցեոլիթի փոշիով:

Պարզեցվում է մաքրման տեխնոլոգիան:

- (51) 7 F16K 3/12 (11) 1387 (13) A2
- (21) P20020156 (22) 16.09.2002
- (42) 17.01.2003

- (71) Ալեքսանդր Մարկարով (AM)
- (72) Ալեքսանդր Մարկարով (AM), Արա Միրզոյան (AM), Դավիթ Դավիդյան (AM)
- (73) Ալեքսանդր Մարկարով (AM)
- (74) Է. Նահապետյան
- (54) Սողնակ (տարբերակներ)
- (57) Գյուտը վերաբերում է արմատուրաշինությանը, մասնավորապես, հեղուկների եւ գազերի փոխադրման խողովակաշարերի վրա տեղադրվող սողնակներին:

Սողնակն ունի շարժաբերի համար անցք ունեցող հեցի տեսքով իրան: Իրանի երկու ճակատային մակերեւոյթները հարթ են եւ սեղմված են անցաթողման անցքեր ունեցող երկու կափարիչներով: Շարժաբերը բաղկացած է իլից եւ սեպածեւ ստորին մասով իլային մանեկից, որը հողակապված է փականի սկավառակների հետ: Սկավառակներն իրար ուղղված մակերեւոյթների եզրերին, իլի առանցքի նկատմամբ տարբեր կողմերում ունեն մեկական ստորին, իսկ մեծ տրամագծով սողնակներում` երկուական` վերին եւ ստորին կոնաձեւ խորացումներ: Սկավառակների համատեղման դիրքում այդ խորացումները համընկնում են` կազմելով խոռոչներ, որոնց մեջ տեղակայված են գնդիկներ: Ընդ որում, ստորին խոռոչների մեջ տեղակայված գնդիկները դուրս են ցցված սկավառակների եզրերից: Մեծ տրամագծով սողնակներում, իլի առանցքի մի կողմում դասավորված խոռոչների յուրաքանչյուր զույգը իրար հաղորդակցվում է գլանաձեւ խոռոչի միջոցով, որտեղ տեղակայված է գլանաձեւ ձողիկ, որի ճակատները հաված են գնդիկներին:

Բարձրացվում է սողնակի հերմետիկությունը, նվազեցվում է ինքնարժեքը, հեշտացվում է մուտքը դեպի կափարիչների խտարար մակերեւոյթները, 2 անկախ կետ, 8 նկ.:

- (51) 7 F16K 35/06 (11) 1388 (13) A2
- (21) P20020212 (22) 10.12.2002
- (42) 17.02.2003

- (71) Լեւոն Աբրահամյան (AM)
- (72) Լեւոն Աբրահամյան (AM), Հայկ Հարությունյան (AM)

- (73) Լեւոն Աբրահամյան, Երեւան, Խորենացու 29, բն.67 (AM)

- (54) Բանալիով կառավարվող փական

- (57) Գյուտը վերաբերում է խողովակաշարային արմատուրային եւ կարող է օգտագործվել շենքերի ջրաբաշխական խողովակաշարերի վրա:

Բանալիով կառավարվող փականն ունի փականի իրանին ամրակցված հիմքասալ, հիմքասալի վրա տեղադրված կափարիչով փակված գլանաձեւ պատյան: Կափարիչի վրա տեղադրված են կողպեքը եւ բռնակը` իր պտտման սռնիով, որը համառանցք է փականի սռնուն եւ կատարված է փականի սռնու հետ համագործակցելու հնարավորությամբ: Բռնակի սռնին զսպանակված է եւ ունի փականի սռնու հետ համագործակցությունից դուրս գալու հնարավորություն, իսկ կողպեքի դարձկեն սռնու վրա ամրակցված է թիթեղ, որն իր դիրքերից մեկում հավում է բռնակի սռնու ճակատային մասին:

Ընդլայնվում է փականի կառավարման հնարավորությունը, 3 նկ.:

- (51) 7 F21K 2/00 (11) 1389 (13) A2
- H01J 61/02

- (21) P20020159 (22) 24.09.2002
- (42) 17.02.2003

- (71) Ալաիկ Սկրտչյան (AM), Վլադիմիր Եգոյան (AM)
- (72) Ալաիկ Սկրտչյան (AM), Վլադիմիր Եգոյան (AM)
- (73) Ալաիկ Սկրտչյան, Երեւան, Հր.Քոչարի 20, բն.3 (AM), Վլադիմիր Եգոյան, Երեւան, Նոր Նորքի 3-րդ միկրոշրջան, Բագիյան 2, բն.28 (AM)

- (54) Լյուսինեսցենտային լուսային սարք
- (57) Գյուտը վերաբերում է լուսատեխնիկայի բնագավառին, մասնավորապես` լույսի զազապարպումային աղբյուրներին, որոնք կարող են կիրառվել տնտեսության տարբեր բնագավառներում լուսավորության համար, ինչպես նաեւ գյուղատնտեսության եւ բժշկության մեջ` ճառագայթահարման համար:

Սարքն ունի ցլարձակ, որը պատված է լյուսինաֆորի շերտով, իսկ որպես լույսի աղբյուր օգտագործված է բարձր ճնշման սնդիկային զազապարպումային լամպ: Ցլարձակը արտաքին միջավայրից մեկուսացված է ջերմակայուն ապակու միջոցով, 1 նկ.:

- (51) 7 F27B 3/04 (11) 1390 (13) A2
- C22B 34/34

- (21) P20030013 (22) 10.02.2003
- (42) 11.04.2003

- (71) «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ (AM)

(72) Գենիկ Կարապետյան (AM), Ջիվան Գյուլունյան (AM), Եղիշե Ստեփանյան (AM), Շոթա Սարգսյան (AM), Աշոտ Մկրտչյան (AM), Աշոտ Ղամբարյան (AM), Թամարա Ներկարարյան (AM)

(73) «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ, Երեւան, Արցախի 75 (AM)

(54) Մոլիբդենի խտանյութի քրծման բազմահատակ վառարան

(57) Գյուտը վերաբերում է մոլիբդենի սուլֆիդային խտանյութի քրծման բազմահատակ վառարանի կառուցվածքին:

Մոլիբդենի խտանյութի քրծման բազմահատակ վառարանն ունի ներսից աղյուսապատված պողպատյա պատյան եւ պատյանին ամրակցված աղեղակամար հատակներ՝ իրենց վրա արված անցքերով: Աղեղակամար հատակը իրենից ներկայացնում է արտաքին եւ ներքին գոտիներից, նրանց կապող ճաղերից եւ ճաղերին մեկական կետերում ամրակցված սալիկներից կազմված մետաղական կոնստրուկցիա, ընդ որում ներքին գոտին ունի լայնական կտրվածքներ: Վառարանն ունի նաեւ կենտրոնական լիսեռ իր շարժաբերով, լիսեռին ամրակցված թելեր իրենց փոցխերով եւ օդի մատուցման ու այրված գազերի հեռացման կարգավորման սարքեր:

Իջեցվում է վառարանի կառուցման եւ վերանորոգման արժեքը, 3 մլ.:

(51) 7 F41G 1/16 (11) 1391 (13) A2  
(21) P20030031 (22) 12.03.2003  
(42) 13.05.2003

(71) Վահան Մանասյան (AM)

(72) Վահան Մանասյան (AM)

(73) Վահան Մանասյան, Երեւան, Մ.Սարյան 40, բն.52 (AM)

(54) Օպտիկական նշանացույց

(57) Գյուտը վերաբերում է հրազենի նշանացույցների, մասնավորապես՝ դրանց ամրակցմանը եւ կարգավորմանը, եւ կարող է կիրառվել ինչպես հրացաններում, այնպես էլ ինքնաձիգներում՝ դիպուկահարային հրաձգության համար:

Օպտիկական նշանացույցն ունի հրազենի փակադակային տուփին կողքից ամրակցվող հենակ: Հենակին հողակապորեն միակցված կրող շերտաձողիկի զսպանակը կատարված է հարթ սահովի, նրա դեպի հողակապ ուղղված ծայրը սեւեռակված է հենակի ճեղքի մեջ, իսկ մյուս ծայրը սահելու հնարավորությամբ հենված է կրող շերտաձողիկին: Նշանացույցի կարգավորող գլխիկն ունի գլանաձև վզիկ, որը տեղադրված է շերտաձողիկի լայնական անցքում ազատ պտտվելու հնարավորությամբ, իր գլանային մակերեսով ունի սեւեռակման օղակաձև ակոս, իսկ ճակատային մասում ունի

ապակենտրոն խուլ անցք, որի մեջ տեղադրված է հենակին ամրակցված բույթի ծայրը:

Պարզեցվում է նշանացույցի կառուցվածքը եւ բարձրացվում է կրող շերտաձողիկի զսպանակման հանգույցի հուսալիությունը, 5 մլ.:

(51) 7 G01D 9/00 (11) 1392 (13) A2  
(21) P20020169 (22) 10.10.2002  
(42) 17.01.2003

(71) «Հայսեյսնշին եւ կառուցվածքների պահպանության ԳՀԻ» ՓԲԸ (AM)

(72) Արմեն Խաչյան (AM), Արմեն Ջարգարյան (AM), Կանո Ղահրամանյան (AM), Գագիկ Ադամյան (AM)

(73) «Հայսեյսնշին եւ կառուցվածքների պահպանության ԳՀԻ» ՓԲԸ (AM)

(74) Է. Նահապետյան

(54) Թվանշանային գրանցող սարք

(57) Գյուտը վերաբերում է հաշվողական տեխնիկայի բնագավառին եւ կարող է կիրառվել տարբեր ոլորտներում տատանումների գրանցման եւ գրանցված տեղեկատվության պահման համար:

Սարքն ունի իրար հաջորդաբար միացված ուժեղարարներ, կոմուտացնող սարք, անալոգաթվանշանային կերպափոխիչ, միկրոպրոցեսոր, հիշողության բլոկ, ինչպես նաեւ գործարկող սարք եւ սնման բլոկ: Հիշողության բլոկը վերածրագրավորվող է, իսկ սնման բլոկը միացված է մյուս սարքերին եւ բլոկներին գործարկող սարքի միջոցով:

Տատանումների բացակայության ժամանակ գործարկող սարքի անջատման տրիգերի ազդանշանով մյուս բլոկները սնուցում չեն ստանում եւ չեն աշխատում, իսկ տատանումների ժամանակ գործարկող սարքի միացման տրիգերի ազդանշանով այդ բլոկները ստանում են սնուցում, եւ տատանումների մասին տեղեկատվությունը կուտակվում է հիշողության բլոկում: Հիշողության բլոկի վերածրագրավորվելու հնարավորության շնորհիվ կուտակված տեղեկատվությունը կարող է պահվել ցանկացած ժամկետով, անգամ սնուցման բացակայության պայմաններում:

Բարձրացվում է սարքի հուսալիությունը եւ ավելանում տեղեկատվության պահման ժամկետը, 2 մլ.:

(51) 7 G01L 9/12 (11) 1393 (13) A2  
G01L 27/00  
(21) P20030014 (22) 12.02.2003  
(42) 13.05.2003

(71) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (AM)

- (72) Վլադիմիր Վարդանյան (AM), Նորայր Վարդանյան (AM), Վարդան Վարդանյան (AM)
- (73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երևան, Տերյան 105 (AM)
- (54) Ճնշման ունակային հայտնիչ եւ նրա կարգավորման եղանակ
- (57) Գյուլտը վերաբերում է չափողական տեխնիկային, մասնավորապես՝ բացարձակ ճնշման չափման ունակային հայտնիչներին:

Հայտնիչն ունի հերմետիկ խոռոչով իրան, կափարիչով փակված, կոշտ կենտրոններով երկու մեմբրան, միջնաձողիկով համապատասխան մեմբրանի հետ միակցված շարժական էլեկտրոդներ: Կափարիչներից մեկն ունի առաջին եւ երկրորդ խողովակառոտ-փականներ եւ համապատասխան մեմբրանի հետ ձեւավորում է հայտնիչի ընդունող խուցը: Առաջին խողովակառոտ-փականով ընդունող խուցը հաղորդակցվում է չափվող միջավայրի հետ, իսկ երկրորդ խողովակառոտ-փականով, գազահաղորդիչ խողովակով եւ իրանի վրա ամրակցված երրորդ խողովակառոտ-փականով՝ իրանի խոռոչի հետ: Հայտնիչն ունի նաեւ ճակատներից մեկը փակ սիլֆոններ, որոնք բաց ճակատով ամրակցված են իրանին, հաղորդակցվում են իրանի խոռոչի հետ եւ ունեն ծավալը փոփոխելու հնարավորություն:

Հայտնիչի կարգավորման եղանակի համաձայն փոփոխում են հայտնիչի ծավալը սիլֆոնների միջոցով, որոշում չափավորման բնութագրի կետերը, համեմատում ավտոգեներատորների հաճախությունների տարբերությունը չափավորման բնութագրի համապատասխան նշանակության հետ եւ իրագործում չափավորման բնութագրի ճշգրտում այդ արժեքների շեղման դեպքում:

Ապահովվում է նուրբ միկրոմետրիկական կարգավորում, բարձրացվում է չափումների ճշգրտությունը, պարզեցվում է հայտնիչի պատրաստման տեխնոլոգիան, 2 անկախ կետ, 5 նկ.:

- (51) 7 G01N 1/02 (11) 1394 (13) A2  
E21B 49/02
- (21) P20030034 (22) 17.03.2003
- (42) 13.05.2003

- (71) Լեւոն Մանուկյան (AM)
- (72) Լեւոն Մանուկյան (AM)
- (73) Լեւոն Մանուկյան, Երեւան, Նոր Նորքի 2-րդ միկրոշրջան, Գայի 103, բն.15 (AM)
- (54) Թույլ կապակցված ջրհագեցած գրունտերի նստվածքաշերտերի նմուշառման սարք
- (57) Գյուլտը վերաբերում է նմուշառման սարքերին, մասնավորապես՝ ջրամբարների,

պղչամբարների լճակային տեղամասերի հատակից թույլ կապակցված եւ ջրհագեցած գրունտերի շերտերի նմուշառման սարքերին եւ կարող է օգտագործվել հիդրոտեխնիկական շինարարությունում, արդյունաբերությունում, որտեղ անհրաժեշտ է վերցնել չխախտված կառուցվածքի նմուշներ: Նմուշառման սարքն ունի սյունակային խողովակ, դրա հետ ամրակցված փակիչներ եւ դրանց արտաքին պատերին ամրակցված լծակներ, որոնց միջոցով փակիչները բաց վիճակում սեւեռվում են մետաղաճոպանի ծայրին ամրացված երիթակով: Սյունակային խողովակի ներսում տեղադրված է նմուշառման սյունակը, որը կազմված է պոլիմերային թաղանթով պատված եւ համառանցք տեղադրված օղակներից, ընդ որում այդ օղակները գրունտերի ֆիզիկամեխանիկական հատկությունների որոշման սարքերի ստանդարտ օղակներ են: Բարձրանում է սարքի աշխատանքի ճշտությունը, 3 նկ.:

- (51) 7 G01R 27/00 (11) 1395 (13) A2
- (21) P20020215 (22) 13.12.2002
- (42) 17.02.2003

- (71) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (AM)
- (72) Արշակ Շաղգամյան (AM)
- (73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երևան, Տերյան 105 (AM)
- (54) Թվանշանային օմաչափ
- (57) Գյուլտը վերաբերում է չափիչ տեխնիկային, մասնավորապես, հաստատուն հոսանքի շղթայում դիմադրության չափիչ սարքերին:

Թվանշանային օմաչափում, որն ունի քառահաղորդալարային սխեմաներով միացված չափվող եւ նմուշային ռեզիստոր, որոնք հոսանքային հաղորդալարերով հաջորդաբար միացված են լարման աղբյուրին, գյուտի համաձայն թվանշանային օմաչափն իրագործված է երկտակտ ինտեգրումով անալոգաթվանշանային կերպափոխիչի տեսքով, որի չափման մուտքին միացված է չափվող ռեզիստորի առաջին պոտենցիալային հաղորդալարը, իսկ հենանիշային լարման մուտքին միացված է նմուշային ռեզիստորի երկրորդ պոտենցիալային հաղորդալարը, չափվող ռեզիստորի երկրորդ պոտենցիալային հաղորդալարը միացված է երկբեւեռ փոխարկիչի առաջին մուտքին, որի երկրորդ մուտքին միացված է նմուշային ռեզիստորի առաջին պոտենցիալային հաղորդալարը, ընդ որում փոխարկիչի կառավարման մուտքը միացված է անալոգաթվանշանային կերպափոխիչի ինտեգրման տակտերի կառավարման ելքին:

Բարձրացվում է չափման ճշտությունը, 1 նկ.:



- (51) 7 G01V 7/12 (11) 1396 (13) A2  
 (21) P20030017 (22) 20.02.2003  
 (42) 13.05.2003  
 (71) ՀՀ ԳԱԱ «Մաշտոց» ճարտարագիտական կենտրոն (AM)  
 (72) Հրանտ Ազիզբեկյան (AM), Էդվարդ Հարությունյան (AM), Ռաֆայել Ղազարյան (AM), Աշոտ Մանուկյան (AM)  
 (73) ՀՀ ԳԱԱ «Մաշտոց» ճարտարագիտական կենտրոն, Աշտարակ-2, Գիտավան-2 (AM)  
 (54) Թեքվաձքների չափման հորատանցքային եղանակ  
 (57) Գյուտը վերաբերում է սեյսմոլոգիայում օգտագործվող զգայուն օպտիկական անկյունային չափումների բնագավառին:

Գյուտի համաձայն մեխանիկական տեղաշարժերի աղբյուրին (երկրագնդին) անշարժ ամրակցված պրիզմայածեւ կապարապակե օպտիկական տարրի մակերևութից լազերային ճառագայթի ներքին լրիվ անդրադարձման կամ մակերևութային պոլյարիտոնների գրգռման միջոցով առաջացնում են կտրուկ նվազող օպտիկական դաշտ՝ «մերձակա դաշտ»: Ազատ կախված ուղղաձիգ ճոճանակի վրա ամրակցված տեղաշարժման տվիչ հանդիսացող լուսատարի ընդունող ծայրը անմիջականորեն մոտեցնում են պրիզմայի մակերևութին և գրանցում թեքվածքների դեպքում լուսատարի «մերձակա դաշտում» առաջացած տեղաշարժին համապատասխանող օպտիկական ազդանշանը:

Ապահովվում են թեքվածքների չափման ռեժիմի ավտոմատացումը, թեքաչափի բարձր զգայունությունը և փոքրածավալությունը, ՅՆԿ.:

- (51) 7 H01L 31/02 (11) 1397 (13) A2  
 (21) P20030015 (22) 14.02.2003  
 (42) 13.05.2003  
 (71) Սուրեն Մարտիրոսյան (AM), Գոհար Հովսեփյան (AM), Փառանձեն Չուրաբյան (AM)  
 (72) Սուրեն Մարտիրոսյան (AM), Գոհար Հովսեփյան (AM), Փառանձեն Չուրաբյան (AM)  
 (73) Սուրեն Մարտիրոսյան, Երեւան, Խանջյան 31, բն.37 (AM), Գոհար Հովսեփյան, Երեւան, Մարգարյան 22, բն.16 (AM), Փառանձեն Չուրաբյան, Երեւան, Չոր. Անդրանիկի 76, բն. 41 (AM)  
 (54) Բինար խալկոգենիդային կիսահաղորդչային թաղանթների ստացման եղանակ

